ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

N 942

«26» հունիս 2025թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզ, քաղաք
Մարտունի,Շահումյան փողոց 2
☏ 060743401
☏ Էլ.փոստ՝ info@martuni.am

«ՎԻ ԷՍ ՏԻ ՍՔԱՅ» ՍՊԸ-ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ՝ Վ. ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանի և «ՎԻ ԷՍ ՏԻ ՍՔԱՅ» ՍՊԸ -ի միջև 08.04.2025թ. կնքված N ԳՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/02-8 գնման պայմանագրի շրջանակներում Ձեր կազմակերպությունը Մարտունու համայնքապետարանի կարիքների համար պետք է մատակարարեր, (բայց ոչ ուշ մինչև 08.05.2025թ.) վերմակներ 300 հատ և սինթետիկ բարձեր 300 հատ:

Հիմք ընդունելով պայմանագրի 2.1.1 կետը (Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի) և 2.1.7 կետը (Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը)՝ Մարտունու համայնքապետարանը 2025թ. հունիսի 26-ին միակողմանի լուծել է պայմանագիրը:

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N526-Ն որոշման N1 հավելվածի 33-րդ կետի 4-րդ ենթակետի պայմանագիր կնքած անձի(կատարողի) ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պայմանագրով սահմանվում են տույժեր և տուգանքեր: Տուգանքի չափը չի կարող պակաս լինել պայամանագրի ընդհանուր գնի 0.5 տոկոսից, իսկ տույժերի չափը 0.05 տոկոսից:Եթե գնման ընթացակարգը կազմակերպվել է չափաբաժիններով, և ընտրված մասնակցի հետ կնքված պայմանագիրը ներառում է մեկից ավելի չափաբաժիններ, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ: Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ պայմանագրի չկատարած մասի գնի նկատմամբ:

Առ 25.06.2025թ. հաշվարկվել է յուրաքանչյուր ուշացած աշխատանքային օրվա համար 0.05 տոկոսի չափով տույժ 18 414 ՀՀ դրամ :

Տեղեկացնում ենք, որ «ՎԻ ԷՍ ՏԻ ՍՔԱՅ» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետարան 900145001484 հաշվեհամարին փոխանցել 18 414 (տասնութ հազար չորս հարյուր տասնչորս) ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագիր 6.2 կետի համաձայն), տույժը հաշվարկված է մինչև 25.06.2025թ. :

Հաշվը առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ պայմանագրի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 360 000 (երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900145001484 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է 540 000 (հինգ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ, որն որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900145001484 հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե մինչև 2025թ. հուլիսի 2-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված 360 000 ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և 540 000 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա «ՎԻ ԷՍ ՏԻ ՍՔԱՅ» ՍՊ ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (հրավեր 8.14 կետի 2-րդ պարբերություն /սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին/): Նշված գումարներն անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2025թ. հուլիսի 2-ը ներառյալ ներկայացնել Մարտունու համայնքապետարանի գնումների բաժին:

Հարգանքներով՝

Համայնքի ղեկավար Հ. Հովեյան

Կատարող՝ Ա.Գրիգորյան
Բաժին՝ Գնումների բաժին
Հեռ. 094334245